

**ՄԱՐԻՆԵ ԳԵՒՈՐԳՅԱՆ**

պարսկական գիր. թեկնածու, ԵՊՀ

**ՍԱՄՎԵԼ ՀԱՀՄՈՒՐԱԴՅԱՆԸ  
ԱՐՅԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏՈՒՄ**

1988 թ. փետրվարի 20-ի պատմական որոշմամբ վերսկսվեց Արցախյան շարժումը, որը հայոց նորագույն պատմության մեջ նոր էջ բացեց: Այն ծավալման առաջին իսկ օրերից միավորեց ողջ հայությունը, նրա տարբեր խավերին, իսկ ավելի ուշ պարզ էր դառնալու, որ շարժումը ծնել է նվիրյալների ու հերոսների մի ողջ համաստեղություն, որոնց թվում էր նաև հայ մտավորականի վառ կերպարը՝ Սամվելը Շահմուրադյանը<sup>1</sup>:

Շահմուրադյանը ծնվել է 1955 թ. փետրվարի 25-ին Երեւանում: Նրա ծնողները հասարակ մարդիկ էին. հայրը՝ Սարգիս Շահմուրադյանը, էլեկտրիկ էր, մայրը՝ Կլարա Ադոնցը, բուժաշխատող. նրանք ապրում էին հայ առաքինի ընտանիքի բնական ազնվականությունը:

Շահմուրադյանը 1972 թ. ավարտել է Երեւանի թիվ 85 դպրոցը, որն այսօր անվանակոչված է իր իսկ անունով: 1972-1974 թթ. ծառայել է ԽՍՀՄ բանակում: 1975-1980 թթ. սովորել է Երեւանի պետական համալսարանի ռուսական բանասիրության ֆակուլտետում: 1980-1990 թթ. աշխատել է ՀՀ Գրողների միության «Литературная Армения» ամսագրում, որպես գրական աշխատակից: 1990 թ. ընտրվել է ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, լրատվական հանձնաժողովի քարտուղար, «Արցախ» պատգամավորական խմբի համանախագահ: Նա առաջիններից էր, ով գիտակցեց Ղարաբաղյան շարժման իրադարձությունների փաստագրման անհրաժեշտությունը, ստեղծում էր շարժման իրավական եւ օրենսդրական հիմքը, մասնակցում էր մեր անկախ Հայաստանի կայացմանը:

Տաղանդավոր լրագրողը մանրամասն արձանագրել է 1988 թ. փետրվարյան ցույցերից մինչեւ 1992 թ. իրադարձությունները: Ռազմական գործողությունների ընթացքում նա գրիչը զուգակցեց զենքով, եւ

<sup>1</sup> Հոդվածին աջակցելու համար հեղինակը խորին շնորհակալություն է հայտնում Ս. Շահմուրադյանի այրուն՝ Նելլի Ռուստամյան-Շահմուրադյանին:

«կյանքն այդ պահից ի վեր այլեւս իրենը, հարազատներինը, երեսաներինը չէր»<sup>2</sup>:

Ինչպես նշում է Ս. Շահմուրադյանի օրագրի խմբագիր Ն. Աթաբեկյանը, Շահմուրադյանի օրագրությունը «հուշապատում չէ, ընդհանրապես գիրք չէ՝ սովորական ընկալմամբ: Դրանք գրառումներ են՝ «արված կոնկրետ իրադարձության ընթացքում, հաճախ ծնկի վրա, տարատեսակ հապավում-գրություններ՝ առանձին թերթիկների վրա: Սամվել Շահմուրադյանը պատմությանն էր, պատմության մեջ, ինքը՝ պատմություն՝ 88-ի հրապարակից մինչև Արցախի բարձունքները, որտեղ եւ զոհվեց»<sup>3</sup>:

Ս. Շահմուրադյանի օրագրության նպատակն էր ի մի բերել իրադարձությունները, երազում էր գրել շարժման պատմությունը, սակայն չհասցրեց, ուստի նրա այրին՝ Նելլի Ռուստամյան-Շահմուրադյանն իր պարտքն է համարել օրագրից մնացած էջերը, պատառիկները հավաքել եւ որպես տպագիր գիրք՝ ներկայացնել հայ ժողովրդի ներկա եւ հաջորդ սերունդներին<sup>4</sup>:

Շահմուրադյանի օրագրային մանրամասն գրառումներից<sup>5</sup> պարզ երևում է, թե որքան խորը պատճառներ ունեին ԽՍՀՄ կենտրոնական մարմինները եւ ադրբեջանական իշխանությունները՝ զարհուրելու օրըստօրե ծավալվող ազատագրական շարժումից, ուստի պատահական չէ, որ շուտով նրանք շարժմանը հակադրելու էին բիրտ ուժ ու բռնություն: Այդ բռնություններին ադրբեջանական կողմից մասնակցում էին ոչ այնքան հասարակ քաղաքացիներ, որքան պաշտոնյաներ: Այսպես, դեռեւս փետրվարի 14-ի գիշերը, երբ Ստեփանակերտում տեղի ունեցավ առաջին ցույցը, Ադրբեջանական ԽՍՀ Կոմկուսի կենտկոմի շրջանային խորհրդի ղեկավար Ասադովը հայտարարեց, որ «հարյուր հազարավոր ադրբեջանցիներ պատրաստ են ցանկացած պահի ներխուժել Ղարաբաղ եւ արյունահեղություն կազմակերպել»<sup>6</sup>: Հայերին ֆիզիկապես ոչնչացնելու սպառնալիքներ հնչեցին նույնիսկ ԽՍՀՄ առաջին դեմքի՝ Մ. Գորբաչովի կողմից: Փետրվարի 26-ին՝ Սոււմգայիթյան դեպքերի նախօրեին, Գորբաչովը արցախյան շարժման առնչությամբ հայ գրողներ Ս. Կապուտիկյանի եւ Զ. Բալայանի հետ

<sup>2</sup> Ս. Շահմուրադյան, Չմոռանալ ոչինչ, Երևան, 1988, կազմող՝ Ն. Շահմուրադյան, Երևան, 2005, էջ 4:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 5:

<sup>4</sup> Հայաստանի հանրային ոստիոյի «Ժամանակի վկան» հաղորդմանը տված Նելլի Ռուստամյան-Շահմուրադյանի հարցազրույցը, 20.06.2012:

<sup>5</sup> Ս. Շահմուրադյան, նշվ. աշխ., էջ 7, 26:

<sup>6</sup> А. Василевский, Туча в горах, 1988, № 10.

Հանդիպման ժամանակ ասաց. «Իսկ դուք մտածե՞լ եք Բաքվի երկու Հարյուր յոթ հազար հայերի ճակատագրի մասին»<sup>7</sup>:

1988 թ. փետրվարի 26-ին ԽՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովը հատուկ կոչով դիմեց Ադրբեյջանի ու Հայաստանի աշխատավորներին՝ հորդորելով դադարեցնել ցույցերն ու հանրահավաքները՝ խոստանալով առաջիկայում լուծել բարձրացված հարցերը: Ս. Շահմուրադյանի հուշերում այդ օրվա կապակցությամբ կարդում ենք. «Ժամը 12-ին ընկեր Դուգիխն ընթերցում է Մ. Ս. Գորբաչովի կոչը՝ հայկական հեռուստատեսությամբ: Լսեցինք: Մի պահ լուռ էին, հետո հիասթափության ալիք անցավ: Ոմանք լաց եղան: Կոմիտեն խոստանում է պայքարել մինչև հարցի վերջնական լուծումը եւ հայտնում, որ Երեւան ժամանած զորքերն ու միլիցիան չեն միջամտելու շարժմանը...»<sup>8</sup>:

Հայտնի է, որ նույն օրը տեղի ունեցավ նաեւ ՀԿԿ կենտկոմի պլենում, որի աշխատանքներին մասնակցեցին ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարներ Վ. Դուգիխը եւ Ա. Լուկյանովը: Պլենումում ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանը պաշտպանեց Մ. Գորբաչովի կոչը՝ ավելացնելով, որ պետք է «կարգ հաստատենք ու իրագործենք Գորբաչովի առաջ քաշած պահանջները<sup>9</sup>: Հայ ժողովուրդը եւս մեկ անգամ հավատաց կենտրոնական իշխանություններին եւ դադարեցրեց գործադուլներն ու հանրահավաքները: Ադրբեյջանցիներն, ընդհակառակը, նոր թափ հաղորդեցին հակահայկական ելույթներին եւ դիմեցին վայրագ գործողություններին»<sup>10</sup>:

1988 թ. փետրվարի 26-ից Բաքվից 35 կմ հեռու գտնվող Սումգայիթ քաղաքում բորբոքվեցին հակահայկական հանրահավաքներ, որոնց գլխավորում էին քաղաքի կուսաշրջկոմների քարտուղարները: Հետագայում Սումգայիթի պաշտոնանկ արված քաղկոմի քարտուղարը հայտարարեց, որ այդ բոլորը կազմակերպվել է Ադրբեյջանի կոմկուսի կենտկոմի եւ նրա առաջին քարտուղարի ցուցումով: Հավանաբար տեղյակ էին նաեւ Մ. Գորբաչովն ու նրա շրջապատը<sup>11</sup>: Փետրվարի 27-ին ադրբեյջանական խուժանը «Մահ հայերին» կոչով տեղական իշխանությունների աչքի առաջ իրագործեց հայ ազգաբնակչության կոտորած: Գազազած խուժա-

<sup>7</sup> З. Балаян, Арцах: раны и надежды. Заметки писателя-народного депутата СССР, Газета “Коммунист”, 13 сентября, 1989.

<sup>8</sup> Ս. Շահմուրադյան, նշվ. աշխ., էջ 16:

<sup>9</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 21, թ. 4-5:

<sup>10</sup> Է. Մինասյան, Հայաստանի երրորդ Հանրապետության պատմություն, Երևան, 2013, էջ 80:

<sup>11</sup> Г. Улубабян, С. Золян, А. Аршакян, Сумгайит... Геноцид... Гласность? Ереван, 1989, с. 55.

նը հայերին սպանում էր բնակարաններում, տանջամահ անում փողոցներում ու հրապարակներում, այրում կենդանի: Պաշտոնական տվյալներով տանջամահ էր արվել 32 մարդ, խոշտանգվել ու ծանր վիրավորվել ավելի քան 200 հոգի: Ո՛չ Սովետային խոստովանությունները, ո՛չ կոտորածները պատահական չեն եղել, ինչպես հետագայում փորձում էին ներկայացնել ադրբեջանական իշխանությունները:

Սամվել Շահմուրադյանին ցնցել էր Սովետային կատարված ցեղասպանությունը: Օրեր եւ շաբաթներ նա զբաղվում էր Սովետային փախստականների հարցերով, գրառում եւ ձայներիզների վրա արձանագրում նրանց վկայությունները, որոնց արդյունքը եղավ ռուսերենով լույս տեսած, ապա այլ լեզուների թարգմանված «Սովետային ողբերգությունը ականատեսների վկայություններով»<sup>12</sup> քաղաքական նշանակության համահավաքը: Ականատեսների վկայությունները կազմում են այս համահավաքի առաջին երկու գրքերը, որոնք թույլ են տալիս լայնորեն վերականգնել սովետային դեպքերը: Առաջին գրքում հարաբերականորեն քիչ են ներկայացված հայերի ինքնապաշտպանության տեսարանները, ինչն արդեն լայնածավալ ներկայացված է երկրորդ գրքում:

Ս. Շահմուրադյանն իրավացիորեն այն կարծիքին էր, որ Սովետային թուրք տեղի ունեցած դեպքերի էությունն այդ քաղաքում ապրող հայերի ցեղասպանությունն էր եւ որ տվյալ հանցագործության քաղաքական նպատակները լիովին ակնհայտ էին<sup>13</sup>: Ինչպես շատ ժամանակակիցների, նրան էլ հուզում էին այն հարցերը, թե ովքեր ծրագրեցին ու իրագործեցին այդ ցեղասպանությունը, ինչու մեղավորները դեռ պատժված չեն, ինչու խորհրդային զորքերի՝ քաղաք մտնելուց հետո էլ ջարդերը շարունակվում էին եւ, վերջապես, ինչու երկրի ղեկավարությունն ու իրավապահ մարմիններն այդ հրեշավոր հանցագործությանը չտվեցին քաղաքական եւ իրավական գնահատական: Իր հետագա մտորումներում Ս. Շահմուրադյանը գտնում է իրեն հուզող շատ հարցերի պատասխաններ, մասնավորապես եզրահանգում է, որ «Սովետային ցեղասպանությունը կազմակերպվել էր դարաբաղյան հարցի կապակցությամբ: Դա հրեշավոր արձագանքն էր ԼՂԻՄ հայ բնակչության ազատ կամարտահայտության՝ մարզը Ադրբեջանական ԽՍՀ կազմից հանելու եւ Հայկական ԽՍՀ կազմին վերադարձնելու՝ իր ձեռով դեմոկրատական շարժմանը»<sup>14</sup>:

<sup>12</sup> Сумгаитская трагедия в глазах очевидцев, составитель С. Шахмурадян, кн. 1, Ереван, 1989.

<sup>13</sup> Տես նույն տեղում, էջ 3:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 4:

Անդերադառնալով Սումգայիթյան ցեղասպանության նպատակներին՝ Ս. Շահմուրադյանն իր համահավաք աշխատանքում նշում է. «Այդ հանցագործության նպատակն էր ղարաբաղյան խնդրի հնարավոր լուծումն արգելափակելը, հայերին նոր, արյունալի գործողությունների հեռանկարով վախեցնելը, ինչի արդյունքում մերոնց կստիպեին հրաժարվել Ղարաբաղյան շարժումից»<sup>15</sup>:

Որպես իր ժողովրդի պատմությանը գիտակ անձ՝ Շահմուրադյանը կարծում էր, որ Սումգայիթյան ցեղասպանությունն իր դաժանությամբ նոր իրողություն չէր, դրա ակունքները գնում էին դեպի պատմության խորքերը՝ վկայակոչելով Բաքվում հայերի ջարդերը 1918 թ., 1920 թ. Շուշիի հայության կոտորածը, Նախիջևանի հայերի հետեւողական ու շարունակական ոչնչացումը ազերիների կողմից եւ այլ նմանատիպ փաստեր: Սումգայիթյան դահիճների դատավարությունը նա համարում էր «կատակերգություն, ուրիշ ոչինչ»<sup>16</sup>, ավելացնելով, որ այդ դահիճները Բաքվում հայտարարվում էին ազգային հերոսներ:

Թե՛ Սումգայիթի օրերին, թե՛ դրանից հետո Շահմուրադյանը զբաղվում էր ականատեսների վկայությունները գրառելով, որից հետո արտահայտում է իր վերաբերմունքը՝ «Սիրտս կտոր-կտոր է լինում», «Սումգայիթցիների ցավը խեղդում է ինձ» եւ այլ արտահայտություններով, որոնցով փոխանցում էր ոչ միայն իր, այլեւ մի ողջ ժողովրդի ցավը, զգվանքն ու հիասթափությունը:

Սումգայիթյան ոճրագործությունը ոչ միայն չընկճեց հայ ժողովրդին, այլեւ համախմբեց համազգային նպատակների իրագործման ճանապարհին: 1989 թ. հունվարից մինչեւ 1991 թ. օգոստոսն ընկած ժամանակահատվածը նշանավորվեցին ժողովրդական նոր հուզումներով: Ազատագրական պայքարին նվիրված բոլոր ուժերը Հայաստանում համախմբելու համար 1989 թ. նոյեմբերին ձեւավորվեց Հայոց համազգային շարժում (ՀՀՇ) կազմակերպությունը: Այս դեպքերին զուգահեռ, մի կողմից ԽՍՀՄ ղեկավարության միտումնավոր քաղաքականությունն Արցախի հարցում, մյուս կողմից հանրապետության կուսակցական ղեկավարության՝ չափից դուրս զգուշավոր գործունեությունը ստիպեցին, որ հայ ժողովուրդը կորցնի հավատը կոմունիստական կուսակցության նկատմամբ: Դրա հետ մեկտեղ ազգային շահերին ծառայող համազգային շարժումը վայելում էր ժողովրդի վստահությունը: Այս ամենը հանգեցրեց հանրա-

<sup>15</sup> Նույն տեղում:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 68:

պետություն քաղաքական կյանքի արմատական եւ շրջադարձային փոփոխությունների, որոնք սկսվեցին Հայաստանի Գերագույն Խորհրդի՝ 1990 թ. մայիսի 20-ի եւ հունիսի 3-ի՝ մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրություններով<sup>17</sup>: Ձեւավորված խորհրդարանը կազմված էր 260 պատգամավորներից եւ սկսեց գործել 1990 թ. հունիսի 20-ից:

1990 թ. ընտրություններում Ս. Շահմուրդյանն ընտրվեց ՀՀ Գերագույն Խորհրդի պատգամավոր եւ վարում էր լրատվական հանձնաժողովի քարտուղարի, ինչպես նաեւ «Արցախ» պատգամավորական խմբի համանախագահի պաշտոնները: Նրա նման պատասխանատու, իրավիճակը սթափ գնահատող մարդն ու հայր տհաճություններ էր արտահայտվում Գերագույն Խորհրդում եւ առհասարակ ՀՀ-ի քաղաքական կյանքում տիրող իրավիճակի մասին: Իր օրագրությունում 1991 թ. նոյեմբեր ամսվա դրությամբ այդ մասին գրում է, որ «Գերագույն Խորհրդում իսկական «բարդակ» է: Քննարկվում է «Գիտ մասին» օրենքը, գրեթե ոչ մի առաջարկ, նույնիսկ ամենապարզն ու անհրաժեշտը չի անցնում. Գիտ-ն ինքնակամ հանձնում է իշխանությունը նախագահին»<sup>18</sup>:

Գերագույն Խորհրդում իր պատգամավորական գործունեության ընթացքում ուշագրավ է Շահմուրդյանի՝ 1991 թվականի ապրիլի 24-ի՝ «Հառնեցինք վերստին» խորագրով ռադիոհաղորդմանը տված հարցազրույցը, որտեղ նա համահայկական խնդիրներից (1915 թ. ցեղասպանություն, Արեւմտյան Հայաստան, Հայ դատ) չի առանձնացնում Արցախը<sup>19</sup>: Ս. Շահմուրդյանի այս հարցազրույցը, ինչպես կարելի է նկատել, ժամանակագրական իմաստով համընկնում էր այն պահին, երբ ադրբեջանական Օմոնը 1991 թ. ապրիլ-մայիս ամիսներին խորհրդային բանակի աջակցությամբ բացահայտ պատերազմ էր սկսել Հյուսիսային Արցախի Շահումյանի շրջանի եւ Գետաշենի ենթաշրջանի դեմ՝ իրագործելով «Օղակ» օպերացիան: Պատերազմն ընդհուպ մոտենում էր Հայաստանի սահմաններին, ուստի Սամվելը կամավոր գնաց ռազմաճակատ՝ անդամագրվելով «Արծիվ» մահապարտների գնդին: «Վերջապես Արցախում եմ, ու թեկուզ պատերազմ է ու մահ, երջանիկ եմ եւ հանգիստ, որ մաքառողների եւ տառապողների հետ եմ, իսկական ընկերների հետ: Երեւանում սիրտս պայթում էր, հոգնել էի ամեն ինչից, խորհրդարանից, կուշտ դժգոհություններից, մադձից, նախանձից, ամեն ինչից զզվել էի. եկա Ար-

<sup>17</sup> Է. Մինասյան, նշվ. աշխ., էջ 103:

<sup>18</sup> Ս. Շահմուրդյան, Չմոռանալ ոչինչ, էջ 135:

<sup>19</sup> Հայաստանի Հեռուստառադիոպետկոմի Երիտասարդական հաղորդումների խմբագրության 1991 թ. ապրիլի 24-ի ռադիոնեղեր:

ցախ՝ իբրեւ փրկութիւն: Այստեղ էլ ամեն ինչ խառնված է մարդկային հարաբերութիւններում, բայց հո՞ Երեւան չի, ուր չես հասկանում՝ ո՞վ է թշնամիդ, ո՞վ է բարեկամդ, այստեղ մարդիկ մեկ բռնուցք են թշնամու, պատերազմի, անասելի այս դժվարութիւնների, ամեն պահ դարանից երեւացող մահվան դիմաց», - գրում է նա 1992 թ. հունվարի 4-ին<sup>20</sup>:

Հայերի եւ աղբբեջանցիների միջեւ կան ընդգծված էական տարբերութիւններ: Հետաքրքիր են այդ տարբերութիւնների շուրջ Ս. Շահմուրադյանի համեմատութիւնները. «Պատերազմ է, եւ ուրիշ ելք չկա, կամ հայն է թուրքին քշելու Արցախից, կամ թուրքը՝ մեզ: Կռվելու ենք<sup>21</sup>, ... դաժանութիւնը մենք թուրքից սովորեցինք, թուրքը մեզանից սովորեց քաղաքականութիւն վարել»<sup>22</sup>: Սամվելին ցավ են պատճառում պատերազմում իր ազգակիցների մի մասի դրսեւորած դաժանութիւնը, ինչպես նաեւ անկազմակերպվածութիւնը, տհաս ղեկավարումը, դասալքութիւնը, թալանը (օրինակ՝ Շուշիի թալանը), ռազմաճակատում տիրող խառնաշփոթը եւ այլն:

Սամվել Շահմուրադյանի կյանքի ու գործունեութեան վերաբերյալ պահպանվել են ժամանակակիցների բազմաթիւ հուշեր: Սամվելի այրին՝ Նելլի Ռուստամյան-Շահմուրադյանը, ամուսնու մասին ասում է. «Երազում էր, որ Արցախը տեսներ ազատ, անկախ, երեւի հիմա հոգին կփառավորվի, էս պահը տեսնելով, որ արդեն 24 տարեկան անկախութեան տեր երկիր է Արցախը»<sup>23</sup>:

Վաղուհասի եկեղեցու հոգեւոր հովիւ տեր Հովհաննես քահանան հիշում է Սամվելին. «Սամվել Շահմուրադյանն ինձ համար մնաց որպես մի հայորդի, ինքը անձն ուրացած վերցրեց իր խաչը, երբ կար հայրենիքի վտանգը, եւ որոշեց պաշտպանել հայրենիքը»<sup>24</sup>: Նիկոլ Դուման ջոկատի ազատամարտիկ Արամ Առաքելյանն այսպես է բնութագրում Սամվելին. «Նա օրինակ է եղել հայ մարդու. հայ մտավորականի, ու հայ զինվորի կեցվածքը ամբողջութեամբ արտացոլվել է մեկ հոգու մեջ՝ դա Սամվել Շահմուրադյանն էր»<sup>25</sup>:

Սամվելը, ով ռազմական գործողութիւնների հենց սկզբից մարտի դաշտում էր, զոհվեց 1992 թ. սեպտեմբերի 11-ին ԼՂ Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի մերձակայքում: Դեռեւս իր կյանքի օրոք նա ար-

<sup>20</sup> Ս. Շահմուրադյան, նշվ. աշխ., էջ 85:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 87:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 105:

<sup>23</sup> Մ. Գետրգյանի հարցազրույցը Նելլի Ռուստամյան-Շահմուրադյանի հետ, 1.03.2016 թ.:

<sup>24</sup> «Նվիրյալները», Սամվել Շահմուրադյան, <http://www.itv.am/hy/videos/2015/10/05>:

<sup>25</sup> Տէն Նույն տեղում:

Ժանացել էր Լենինյան Կոմերիտմիության (1989 թ.) եւ ՀՀ Թեքեյան մշակութային միության «Վահան Թեքեյան» մրցանակների (1992 թ.), իսկ հետմահու ստացած մրցանակներ են ՀՀ Ժողովրդաստների միության «Ոսկե գրիչ» (1994 թ.) մրցանակը, ՀՀ Երկրապահ կամավորական միության պատվոգիրը եւ հուշամեդալը (1995 թ.), առաջին աստիճանի «Մարտական խաչ» շքանշանը (1996 թ.), «Արծիվ մահապարտ» հուշամեդալը (1997 թ.), ԼՂՀ «Մխիթար Գոչ» շքանշանը (2003 թ.), «Արծիվ» մահապարտների միության «Վազգեն Սարգսյան» շքանշանը (2007 թ.), ԼՂՀ «Արիության համար» շքանշանը (2012 թ.): Շքանշանների այս շարքը չի թեթեւացնում նրա կորուստն իր ընտանիքի, ընկերների ու ողջ ազգի համար, սակայն թերեւս թույլ է տալիս եզրակացնելու, որ Սամվելի գործը մեղանում գնահատված է:

## РЕЗЮМЕ

Член Союза писателей и журналистов, депутат Верховного Совета Армении Самвел Шахмурадян - один из тех патриотов, которые отдали свою жизнь за Арцах, за установление и провозглашение независимости Армении. С первых дней арцахского движения и до самой своей смерти в 1992 году, он активно участвовал в этой борьбе. В 1989 году он издал сборник под названием «Сумгаитская трагедия», основанный на свидетельствах и воспоминаниях очевидцев, а его хроника «Не забыть ничего», посвященная событиям 1988-1992 гг., проливает новый свет на тот героический период, когда армянский народ боролся за свою национальную самобытность, право и возможность иметь собственное государство.

## SUMMARY

Member of the Supreme Council of Armenian Parliament, as well as member of the Union of Journalists and Writers Samvel Shahmuradyan, was one of those devotees who sacrificed their lives for Artsakh and for establishment of independent state in Armenia. He took an active part in the first days of Karabakh movement until his death in 1992. He wrote down eyewitness accounts about the genocide of the Armenians in Sumgait and created a collective work of great importance named "Sumgait tragedy", based on data of his diaries called "Not to forget anything" dedicated to the events of 1988-1992, which sheds a new light on the heroic period when the Armenian people confirmed its national identity, the right and ability of having a statehood through the national liberation movement.

